



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ Ս. ԽԱՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 11 Դեկտեմբերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետե Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY CROSS CATHEDRAL IN MONTEBELLO

On Sunday, December 11, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello.

ԹԵՄԻՍ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ



Նախագահութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի եւ նախաձեռնութեամբ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմնի, Շաբաթ, 3 Դեկտեմբեր, 2011-ին, Ս. Թաղեսու եւ Ս. Բարթողոմէոս Առաքելներու տօնին, միօրեայ լսարան-հաւաք տեղի ունեցաւ Կիրակնօրեայ Դպրոցներու տեսուչներուն եւ

ուսուցիչներուն համար, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ:

Համագումարին կը մասնակցէին շուրջ քառասուն ուսուցիչ-ուսուցչուհիներ, Քրիստոնէական Դաստիարակութեան գրասենեակի վարիչ՝ Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, եւ Ս. Խաչ Մայր Տաճարի Հոգեւոր Հովիւներ Արժ. Տ. Նարեկ Ա. Քհնյ. Փեղիվանեան եւ Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան:

Հաւաքական կարճ աղօթքէ եւ շարականներու երգեցողութենէն ետք, Վարիչ Մարմնի ատենապետ Տիար Յակոբ Չաղացպանեան կատարեց բացման խօսքը: Լսարան-հաւաքի աշխատանքներու վարիչ՝ Գերայ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան կատարեց հոգեւոր խորհրդածութիւն, հրաւիրելով ներկաները, որ Յիսուսի առաքելներուն եւ աշակերտներուն օրինակով, շարունակեն անձնդիր նուիրուիլ իրենց ինամքին յանձնուած մանուկներու հոգեւոր եւ հայեցի դաստիարակութեան սրբազան պարտականութեան:

Օրուան բանախօս Տիկին Նորա Շիթիլեան, խօսեցաւ »Նոր սերունդի դաստիարակութիւնը եւ մտածելակերպը« նիւթին շուրջ, վերլուծելով եւ քննարկելով մանուկներու դիմագրաւած ամբնօրեայ դժուարութիւնները եւ մարտահրաւերները, որոնք մտահոգութիւն են ծնողներու եւ դաստիարակներու համար: Ծնող ու դաստիարակ պետք է լսեն, աջալուրջ հետեւին եւ ուղղութիւն տան մանուկներու եւ պատանիներու դիմագրաւած դժուարութիւններուն եւ դրապէս նպաստեն անոնց նկարագրի կազմութեան: Ուղղուած հարցումներուն եւ մտահոգութիւններուն մասին մանկավարժ դասախօսուհիին տուած լայն բացատրութիւնները, դասախօսութիւնը վերածեցին մտրմիկ եւ օգտակար գրոյցի:

Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, գնահատական եւ քաջալերական խօսքերով վեր առաւ դաստիարակչական բնոյթով կազմակերպուած նման հաւաքներու անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը, եւ այս առթիւ անդրադարձաւ Հայ Եկեղեցւոյ հիմնադիր Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելներու կեանքին եւ Հայաստան աշխարհի տարածքին առաքելութեանց եւ նահատակութեանց մասին: Մեր սպասումն է, ըսաւ Սրբազանը, «Կիրակնօրեայ դպրոցներէն ներս, ձեզի յանձնուած աշակերտները մեր առաքելական Ուղղափառ դաւանանքին համաձայն եւ մեր եկեղեցական հայրերու հաւատալիքներով ու արժէքներով դաստիարակէք»:

Համագումարին մասնակցող ուսուցիչ-ուսուցչուհիներ առիթ ունեցան նաեւ իրենց կիրակնօրեայ դպրոցներու վերաբերեալ մտահոգութիւններ եւ կրօնա-դաստիարակչական ծրագիրներուն առնչուող հարցեր արծարծել:

Հաւաքը խմբային նկարով եւ փակման աղօթքով՝ Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչաց միօրեայ հաւաքը վերջ գտաւ յետ միջօրեի ժամը 4ին:

SUNDAY SCHOOL TEACHERS SEMINAR HELD AT THE PRELACY

On Saturday, December 3rd, the Feast of St. Thaddeus and St. Bartholomew, a seminar for Sunday School teachers was held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall.



The seminar was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate and was organized by the Sunday Schools' Directorate. The Prelate was in attendance and conveyed his message to the participants.

Also participating were Very Rev. Fr. Muron Aznikian, and Pastors of Holy Cross Cathedral Archpriest Fr. Nareg Pehlivanian and Rev. Fr. Ashod Kambourian.

Nearly forty teachers participated in the seminar, which featured Mrs. Nora Chitilian as the keynote speaker.

The seminar began with an opening prayer and the singing of hymns, after which Sunday Schools' Directorate Chair Mr. Hagop Tchagaspanian welcomed the participants. A spiritual reflection was then offered by Fr. Muron,

who called on the teachers to follow in the example of our Lord Jesus Christ and His disciples by continuing to devote themselves to the spiritual care and growth of our youth.

The keynote speaker was then invited to present her topic on the instruction and thought process of the new generation. Mrs. Chitilian spoke on the daily challenges and influences faced by today's children, which are of concern to their parents and educators. Parents and teachers be attentive and aware of what our children face and work together to alleviate those concerns to ensure that our children grow up with the right influences and on the right path, said Mrs. Chitilian. A question and answer session followed the lecture.

In his message, the Prelate commended the organizers and participants of the seminar, stressing the importance and value of such gatherings. Given that the day coincided with the Feast of St. Thaddeus and St. Bartholomew, the Prelate spoke of the lives and virtues of the disciples and their mission in the Armenian nation. "It is our expectation that the students entrusted to you at our Sunday Schools receive education and instruction that is in accordance with our Apostolic and Orthodox creed and the teachings of our church fathers", concluded the Prelate.

The teachers then had the opportunity to share their concerns and ideas and also discussed the curriculum of the upcoming year.

The seminar concluded with the benediction and a group photo.
